ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Օգոստոսի 21-ին, 2020թ.

Շտապ թողարկման համար

ՈՒՐԲԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է
Սևծովյան ավազանում շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված համատեղ ջանքեր
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Երևան, Հայաստան. 2020թ. օգոստոսի 21-ին «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամը պաշտոնապես մեկնարկեց «Սևծովյան ավազանում շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված համատեղ ջանքեր (BeECO)» ծրագիրը, որը ֆինանսավորվում է ԵՀԳ Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցություն ծրագրի շրջանակներում: Ծրագրի գործողությունները սկսվել են 2020թ. հունիսի 1-ին Պրո Նատուրա Գալաթի ասոցիացիա (Ռումինիա), «Ստորին Դանուբի Եվրարեգիոն» անդրսահմանային համագործակցության ասոցիացիա (Ռումինիա), Իմերեթիի գիտնականների «Սպեկտրի» միություն (Վրաստան), Անդրսահմանային համագործակցության եվրոպական ինտեգրացիայի գործակալություն (Մոլդովա), համագործակցությամբ: Ծրագրի ղեկավար կազմակերպությունը «Ստորին Դանուբի Եվրարեգիոն» անդրսահմանային համագործակցության ասոցիացիան է:

Ծրագրի հիմքում ծրագրի կոնսորցիումի այն ընդհանրական գաղափարն է, որ գետերի և ծովերի աղբի կրճատմանն ուղղված ընդհանուր կրթությունը, իրազեկումը և գետերի մաքրման արշավները ծայրաստիճան արդյունավետ կարող են լինել Սև ծովի շրջակա միջավայրի պաշտպանության համար: Այս գաղափարը հնարավոր կլինի իրականացնել հետևյալ գործողությունների միջոցով.

- տեղեկատվական և իրազեկման արշավներ տեղական համայնքների շրջանում,
- Սևանա լճի, Դանուբ ու Ռիոնի գետերի և Բելեու լճի շրջակայքի ընդհանուր մաքրման միջոցառումներ,
- SS հավելվածի մշակում, որը թույլ կտա հայտնաբերել գետերի և լճերի

շարունակությունը հաջորդ էջին

երկայնքով առաջացած աղբակույտերը և թափոնները,
- շրջիկ պարեկության ստեղծում՝ նշված տարածքներում թափոնների հայտնաբերման և դրանց մասին հաղորդման համար,
- կարողությունների զարգացման քարոզարշավի կազմակերպում («թափոնների կրճատում, վերօգտագործում, վերամշակում», «բնապահպանական ռենջեր», «բնապահպանական ձեռներեցություն»):

Սևանա լիճը՝ Հայաստանի կապուտաչյա գեղեցկուհին, որը գտնվում է ծովի մակարդակից 1900մ բարձրության վրա, Կովկասում ամենախոշոր լիճն է, իսկ աշխարհի ամենամեծ բարձրադիր քաղցրահամ լճերից մեկը:

Մոտ 28 գետ թափվում է լիճ, պոպուլյացիան ներառում է հազվադեպ և էնդեմիկ ձկնատեսակներ՝ իշխան, կողակ, ինչպես նաև սիգ: Սևանա լճի էկոհամակարգին վնաս է հասցնում ափամերձ տարածքներում կուտակվող աղբը, ինչպես նաև պլաստիկ, կենցաղային և արդյունաբերական թափոնները, որոնք գետերի միջոցով հոսում են լիճ:

Սևանա լիճը ծրագրի 4 վայրերից մեկն է, որը կշահի ծրագրի շրջանակներում մշակվելիք նորարարական լուծումներից՝ *SS հավելվածից*, որը տեղական *բնապահպանական պարեկային ծառայությանը* հնարավորություն կտա համապատասխան մարմիններին փոխանցելու տեղեկատվություն տուժած տարածքի, թափոնների բնույթի և քանակի մասին:

<u>Ծրագրի տևողությունը 24 ամիս է:</u>

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից Սևծովյան ավազանի երկրների 2014-2020թթ. Համատեղ գործառնական ծրագրի շրջանակներում: Ծրագրի իրականացման համար Եվրոպական միության կողմից տրամադրվող գումարը 647 560.40 եվրո է:

Ծրագիրը նախատեսում է բարձրացնել հասարակության բնապահպանական կրթության և իրազեկվածության մակարդակը, համատեղ ջանքերով մշակել շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված նորարարական մոտեցումներ՝ նպաստելու գետերի և Սևծովյան ավազանի աղտոտման կրճատմանը: Ծրագրով նախատեսվում է անցկացնել սեմինարներ և վերապատրաստման դասընթացներ

շարունակությունը հաջորդ էջին

թիրախային խմբերի՝ տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, կրթական հաստատությունների և գիտական կենտրոնների ներկայացուցիչների համար, կազմակերպել կլոր սեղաններ, մաքրման համատեղ արշավներ և ստեղծել բնապահպանական միասնական հարթակ ծրագրի մասնակից երկրներում, որը կնպաստի լավագույն փորձի տարածմանը և հնարավորություն կտա ներդնելու նորարարական մոտեցումներ թափոնների կառավարման ոլորտում:

Տեղեկությունների համար դիմել՝
«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ
Ալեք Մանուկյան 9, 0070 Երևան, ՀՀ
Հեռ.՝ (00 374 60) 612070
Էլ.փոստ՝ info@urbanurbanfoundation.am

Սևծովյան ավազանի երկրների 2014-2020թթ. Համատեղ գործառնական ծրագիր

«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ

Օգոստոսի 21-ին, 2020թ.
Սևծովյան ավազանի երկրների 2014-2020թթ. Համատեղ գործառնական ծրագիրը ֆինանսավորում է Եվրոպական միության Եվրոպական հարևանության գործիքի միջոցով և մասնակից երկրների՝ Հայաստանի, Բուլղարիայի, Վրաստանի, Հունաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ռումինիայի, Թուրքիայի և Ուկրաինայի կողմից:

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամը, և այն որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:

Վերջ